ԿԱՐԾԻՔ

Ռոզա Աշոտի Աբրահամյանի՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» վերտառությամբ, ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Պատժի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքները քրեակատարողական իրավունքի հիմնարար և առանցքային սկզբունքներից են, որոնց տեսական և կիրառական նշանակությունը պայմանավորված է պատժի նպատակների արդյունավետ իրացման, դատապարտյալների դասակարգման, քրեակատարողական ներգործության միջոցների նպատակային կիրառման և քրեակատարողական հիմնարկներում իրավակարգի ապահովման անհրաժեշտությամբ: Այդ սկզբունքների բովանդակությունը ձևավորվում է հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությամբ, իսկ դրանց շուրջ գիտական գրականությունում երկար տարիներ շարունակվում են բանավեճերը՝ կապված անվանման, իրավական բնույթի, գործողության շրջանակի, ինչպես նաև քրեակատարողական իրավունքի սկզբունքների համակարգում զբաղեցրած տեղի հետ:

Հայաստանի Հանրապետությունում 2004 թվականին քրեակատարողական օրենսգրքի ընդունմամբ փորձ կատարվեց օրենսդրորեն ամրագրել պատժի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքները՝ լրացնելով մինչ այդ առկա իրավական բացը: Սակայն սկզբունքների ընդհանուր և ոչ բավարար չափով հստակ ձևակերպումները չհանգեցրին տեսական տարաձայնությունների հաղթահարմանը և գործնական կիրառման միասնական մոտեցումների ձևավորմանը: Այս առումով 2022 թվականի նոր քրեակատարողական օրենսգրքի ընդունումը կարևոր և նշանակալից փուլ հանդիսացավ, քանի որ օրենսդիրը ոչ միայն ամրագրեց սկզբունքների համակարգը, այլև փորձեց հստակեցնել դրանց նորմատիվ բովանդակությունը՝ ներդնելով նոր իրավական մոտեցումներ և կարգավորումներ: Այնուամենայնիվ, օրենսդրական փոփոխությունները դեռևս պահանջում են խորքային գիտական վերլուծություն և տեսության հետ համադրում՝

սկզբունքների արդյունավետ կիրառությունն ու դրանց իրական կենսագործումն ապահովելու նպատակով:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ քրեակատարողական համակարգում ընթացող խորքային բարեփոխումներով, պատժի կատարման նոր չափորոշիչների ներդրմամբ և քրեական ու քրեակատարողական օրենսդրության զարգացման արդի միտումներով: Ժամանակակից պայմաններում, երբ էական վերափոխումների են ենթարկվում պատժատեսակների համակարգը, դատապարտյալների դասակարգման չափանիշները և քրեակատարողական հիմնարկների գործունեության կառուցակարգերը, առանձնահատուկ կարևորություն է ստանում տարբերակման և անհատականացման սկզբունքների արդյունավետության գնահատումը:

Այս համատեքստում հետազոտությունը նպատակ ունի ոչ միայն կատարելու տեսական ճշգրտումներ և գիտական հիմնավորումներ, այլև մշակելու գործնական առաջարկներ, որոնք կնպաստեն դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեակատարողական ներգործության իրավական հիմքերի ամրապնդմանը, պատժի նպատակների արդյունավետ իրացմանը, քրեական և քրեակատարողական օրենսդրության ներդաշնակեցմանը, ինչպես նաև տարբերակման և անհատականացման կառուցակարգերի կատարելագործմանը:

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է համադրել տարբերակման և անհատականացման սկզբունքների վերաբերյալ ձևավորված գիտական մոտեցումները նոր քրեակատարողական օրենսդրության կարգավորումների հետ՝ նպաստելով քրեակատարողական իրավունքի սկզբունքների համակարգի հստակեցմանը, դրանց բովանդակության ճշգրտմանը և իրավական բնույթի գիտական հիմնավորմանը: Միաժամանակ ներկայացված են տեսական և գործնական արժեքավոր առաջարկություններ, որոնք կարող են ծառայել ինչպես օրենսդրության հետագա կատարելագործմանը, այնպես էլ քրեակատարողական հիմնարկների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Վերը շարադրվածը վկայում է, որ քննարկվող թեման լիովին համապատասխանում է ժամանակակից քրեակատարողական իրավունքի առաջնահերթություններին և ունի էական գիտագործնական նշանակություն, իսկ

հեղինակին հաջողվել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակի բավարարող և արդիական հետազոտական աշխատանք:

Ատենախոսության՝ «Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների տեսագործնական հիմնահարցերը» վերտառությամբ 1-ին գլխում հեղինակը, ի թիվս այլնի, հետազոտել է քրեակատարողական իրավունքի սկզբունքների երաշխիքների հիմնահարցը, պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների տեսագործնական հիմնահարցերը:

Ատենախոսության՝ «Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների հիմնահարցերը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ» վերտառությունը կրող 2-րդ գլխում հեղինակը հետազոտման է ենթարկել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքերի ձևավորման, օրենսդրական ամրագրման գործընթացը և զարգացման տեսական ուղղությունները, պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների քրեակատարողական էությունը:

Ատենախոսության՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքների օրենսդրական բարեփոխումները և կենսագործման կառուցակարգերի հիմնախնդիրները» վերտառությամբ 3-րդ գլխում հեղինակը հետազոտել է Ազատազրկման կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման նորմատիվ իրավական կառուցակարգերի շրջանակի վերաբերյալ ավանդական տեսագործնական մոտեցումները, Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման նորմատիվ կառուցակարգերի օրենսդրական բարեփոխումները և կատարելագործման հնարավոր ուղիները:

Հետազոտության արդյունքներով հեղինակը կատարել է արժեքավոր եզրահանգումներ և առարկներ, որոնք արտացոլված են Ատենախոսության եզրակացությունում և պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշ նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին:

1. Հեղինակը աշխատության 1-ին գլխի 2-րդ պարագրաֆում խոսելով քրեակատարողական իրավունքի սկզբունքների երաշխիքների մասին՝ հանգում է նաև եզրակացության (էջ 41), որ <<իրավական երաշխիքների շրջանակում ներառվում են նաև միջազգային իրավական երաշխիքները>>, սակայն չի նշվում որևէ միջազգային-իրավական փաստաթուղթ կամ կարգավորում:
2. Աշխատության 2-րդ գլխի 1-ին պարագրաֆում (էջ 54) հեղինակը եզրահանգում է հետևության, որ <<պատմության Հին և Միջին շրջաններում ազատազրկման որպես պատժատեսակի սահմանման ու կիրառման գործընթացում նկատվում են տարբերակման և անհատականացման դրվագային դրսևորումներ, եզակի փաստեր>>, մինչ այդ սակայն ներկայացնելով <<<Հին>> շրջանի իրավակիրառ պրակտիկան:
3. Աշխատության 3-րդ գլխում հեղինակը խոսում է ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացմնան իրավական երաշխիքների օրենսդրական բարեփոխումների և ***<u>կենսագործման կառուցակարգերի հիմանխնդիրների</u>*** մասին՝ ներկայացնելով վերջինիս վրա ազդեցություն ունեցող մի շարք հանգամանքներ: Կարծում ենք ճիշտ կլիներ քննարկվող սկզբունքների լիարժեք կյանքի կոչելու տեսանկյունից քննարկվեր նաև այնպիսի սուբյեկտիվ գործոններ, ինչպիսիք են կիրառող անձնակազմի մասնագիտական կարողությունները և հմտությունները, ինչպես նաև բավարար մարդկային ռեսուրսների (անձնակազմի) առկայությունը:
4. Նույն գլխի շրջանակներում, թերևս կարելի էր նաև ներկայացնել միջազգային մասնագիտացված կառույցների մոնիտորինգի արդյունքներ՝ ՀՀ-ում քննարկվող սկզբունքների իրավակիրառ պրակտիակյում առկա խնդիրների տեսանկյունից:

5. Աշխատության մեջ հեղինակը համեմատական վերլուծություն է կատարել միայն՝ ՀՀ քրեակատարողական և ՌԴ քրեակատարողական օրենսդրությունների միջև: Կարծում ենք աշխատանքը էականորեն կշահեր, եթե ներկայցվեր նաև այլ երկրների օրենսդրություններ, հեղինակների կարծիքներ:

Ներկայացված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում կատարված աշխատանքի գիտական արժեքը և դրական գնահատականը:

Ռոզա Աշոտի Աբրահամյանի՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի՝ իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրապարակած գիտական հոդվածները՝ ատենախոսության հիմնական դրույթները:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Արթուր Օսիկյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արթուր Օսիկյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ

Աշոտ Պետրոսյան

20.05.2026թ.